

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի ուղերձը Հայաստանի Առաջին Հանրապետության տոնի առթիվ

Հարգելի հայրենակիցներ

1918 թվականի մայիսի 28-ին հռչակելով Հայաստանի Հանրապետության անկախությունը՝ մեր պապերը վճռականորեն դրեցին ազատ ու ստեղծագործ հայրենիք կերտելու առաջին անխախտ հիմնաքարը, որի վրա վեր բարձրացան Հայաստանի Խորհրդային Եւ Երրորդ Հանրապետությունները: Իսկ մայիսի 28-ի պատմական սխրանքն ապահոված Սարգարապատի, Բաշ-Ապարանի եւ Ղարաքիլիսայի հաղթական հերոսամարտերը մեր սերնդին քաջալերող օրինակ ծառայեցին Արցախի ազատագրական մարտերում:

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Հայաստանի Առաջին Հանրապետության տոնի առթիվ, մաղթում խաղաղ ու անպարտ հայրենիք, երջանկությամբ ու հաջողություններով լի օրեր, նորանոր հաղթանակներ:

Լավագույն ցանկություններով՝

Գեղարքունիքի մարզպետ՝ Ռաֆիկ Գրիգորյան